Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 58-1
Էլեկտրոնային հասցե՝ Virtuouslaw@gmail.com
Հեռախոսահամար՝ +374 (91) 80-50-08

VIRTUOUS

«25» ապրիլի, 2022 թվական

ՀՀ արդարադատության նախարար,
պարոն՝ Կարեն Անդրեասյանին

Լարիսա Սերգեի Թոթոլյանի
(նույն. քարտ՝ 005723713, տրված 16.11.2016թ. 011-ի կողմից,
հաշվառման հասցեն՝ ՀՀ, քաղաք Երևան, Խորենացի 6, 9)
ներկայացուցիչ՝ Նարեկ Երվանդի Սամսոնյանից
(նույն. քարտ՝ 008261950, տրված 03.05.2018թ. 011-ի կողմից,
փաստաբանական գործունեության արտոնագիր՝ 2354,
ծանուցման հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 58-1)

Հանրագիր
(Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի հարկադիր կատարողների կողմից թույլ տրված խախտումների, թերությունների և վերջիններիս գործունեության բարելավման վերաբերյալ)

Հարգելի՝ պարոն Անդրեասյան,

1.1. ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:

Հանրագրերի մասին ՀՀ օրենքի համաձայն՝ «(...) 1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հանրագիր**՝ Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց **գործունեության թերությունների մասին հաղորդում** կամ պետական և տեղական ինքնակառավարման

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարարություն
Մուտք No 2415/2022
«27» 04 2022 թ.

մարմինների ու պաշտոնատար անձանց **գործունեության բարելավման**, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն.

2) **անհատական հանրագիր՝** հանրագիր, որը ներկայացրել է մեկ անձ (...)»:

«Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «(…) 2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝

1) Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը»:

«Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «(…)3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից այդ պահի դրությամբ գործող հետևյալ մարմինները գործում են **սույն օրենքով նախատեսված ենթակայության շրջանակներում՝ որպես պետական կառավարման համակարգի մարմիններ՝**(…)»:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կանոնադրության համաձայն՝ «12. Ծառայության կառավարումն իրականացնում է Արդարադատության նախարարը:

13. Նախարարը՝(…)

3) իրականացնում է ծառայության գործունեության վերահսկողությունը»:

1.2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում: **Հարկադիր կատարողը որոշումը կայացնում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում**, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ (…)»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի համաձայն՝ «**Արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե՝**

1) առկա են սույն օրենքի 42 հոդվածում նշված հիմքերը(…)»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ «**Հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է**, եթե՝ (…) 10) հայցը թողնվել է առանց քննության, մերժվել է, կամ **դատական գործի վարույթը կարճվել է** (…)»:

Այսպիսով, օրենքով նախատեսված հիմքի ի հայտ գալու պահից **եռօրյա ժամկետում** հարկադիր կատարողը պարտավոր է կայացնել գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթը կարճելու մասին որոշում, այսինքն՝ անկախ դիմում և/կամ միջնորդություն ներկայացված լինելու հանգամանքից Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/15965/02/19 քաղաքացիական գործով 25.11.2019 թվականին կայացված որոշման պատճենը ստանալու պահից հարկադիր կատարողը կրում է գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու պարտականություն:

1.3. Սույն դեպքում 10.02.2022 թվականին հարկադիր կատարման ծառայություն եմ ներկայացել թիվ ԵԴ/15965/02/19 քաղաքացիական գործով 25.11.2019 թվականին կայացված գործի վարույթը կարճված լինելու մասին որոշումը՝ խնդրելով հանել գույքն արգելանքից և կարճել կատարողական վարույթը, այսինքն՝ առնվազն 10.02.2022 թվականից հարկադիր կատարման ծառայությունը տեղեկացվել է գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթը կարճելու հիմքի առկայության մասին, մինչդեռ այն հարկադիր կատարողը, որի վարույթում գտնվել է տվյալ գործը՝ Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի պետ, պարոն՝ Մհեր Խուրշուդյանի գլխավորությամբ դրսևորել է անգործություն և չի կատարել իր պարտականությունը, այն է՝ **եռօրյա ժամկետում չի կատարել** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջը և պատասխան գրությամբ հայտնել է, որ ներկայացված դիմումին ընթացք չի տալիս:

1.4. Գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթը կարճելու հիմքի առկայության մասին է վկայում այն, որ հարկադիր կատարողը 03.03.2022 թվականին որոշել է կատարել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի պահանջը հանել գույքի վրա դրված արգելանքը և կարճել գործի վարույթը՝ հիմք ընդունելով հենց «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ կարգավորումները, սակայն ակնհայտորեն չկատարելով՝ **եռօրյա ժամկետում իր պարտականությունը կատարելու կարգավորումը**՝ խախտելով Լարիսա Թոթոլյանի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ եռօրյա ժամկետը չպահպանելն ակնհայտորեն պայմանավորված չի եղել ծանրաբեռնվածությամբ, քանի որ 10.02.2022 թվականից մինչև 03.03.2022 թվականն ընկած ժամանակահատվածում վերոնշյալ անձինք վարույթը կարճելու և արգելանքները հանելու, երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումները քննության առարկա չդարձնելու անհիմն և ապօրինի գրություններ կազմելու ժամանակ են ունեցել:

1.5. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը (...)»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ **վարչական մարմնի նախաձեռնությամբ**»:

Վճռաբեկ դատարանը թիվ **ՎԴ/2664/05/15** վարչական գործով **04.04.2022** թվականին կայացված որոշմամբ արձանագրել է, որ. «(...) կատարողական վարույթի շրջանակներում **բոլոր շահագրգիռ անձինք** պետք է օբյեկտիվ հնարավորություն ունենան իրացնելու իրենց իրավունքները և պաշտպանելու իրենց օրինական շահերը, **որը հնարավոր է կատարողական վարույթում որպես երրորդ անձ ներգրավվելու դեպքում միայն**: Հետևաբար կատարողական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու նպատակով պետք է հավասար հնարավորություն ընձեռվի կատարողական վարույթին բոլոր շահագրգիռ անձանց ներգրավվածությունն ապահովելու համար (...)»:

Սույն դեպքում, **03.03.2022** թվականին հարկադիր կատարման ծառայություն եմ ներկայացել Լարիսա Թոթոլյանին երրորդ անձ ներգրավելու մասին դիմում, քանի որ փաստացի արգելանք է կիրառվել Լարիսա Թոթոլյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ: Մինչդեռ, **04.03.2022** թվականի պատասխան գրությամբ իրազեկվել եմ, որ երրորդ անձ ներգրավելու մասին որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Դատարանին:

1.6. Այսպիսով, այն հարկադիր կատարողը, որի վարույթում գտնվել է տվյալ գործը՝ Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի պետ, պարոն՝ Մհեր Խուրշուդյանի գլխավորությամբ Լարիսա Թոթոլյանին ոչ միայն չեն ներգրավել իրենց նախաձառենությամբ, այլև մեր դիմումը չեն բավարարել, նշելով, որ նման լիազորություն չունեն, մինչդեռ, ինչպես օրենքի, այնպես էլ այն մեկնաբանող ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումից ակնհայտորեն հետևում է, որ շահագրգիռ անձին ներգրավելու պարտականություն հարկադիր կատարողն ունի: Բացի այդ ակնհայտ է, որ հենց Դատարանը

չի կարող ունենալ նման լիազորություն, քանի որ ներկայացվել է վարչական վարույթին, այլ ոչ թե դատական վարույթին երրորդ անձ ներգրավելու մասին դիմում: Նշվածից հետևում է, որ տվյալ անձինք չեն տիրապետում իր լիազորություններին և չեն տարբերում վարչական վարույթը դատական վարույթից կամ տիրապետում են, սակայն չեն ցանկացել դրանք իրականացնել, իսկ իր լիազորությունները չկատարելու արդյունքում խախտվել է Լարիսա Թոթոլյանի սեփականության իրավունքը, քանի որ գործի վարույթը կարճվելուց հետո ավելի քան երկու տարի վերջինիս գույքը գտնվել է արգելանքի տակ:

1.7. Ավելին, հակված լինելով առաջին տարբերկանին, այնուամենայնիվ կարծում եմ, որ այն հարկադիր կատարողը, որի վարույթում գտնվել է տվյալ գործը՝ Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի պետ, պարոն՝ Միհեր Խուրշուդյանի գլխավորությամբ 03.06.2019 թվականից մինչև 03.03.2022 թվականը՝ սեփական նախաձեռնությամբ, իսկ հետագայում՝ Լարիսա Թոթոլյանի դիմումի հիման վրա Լարիսա Թոթոլյանին չներգրավելով կատարողական վարույթին՝ թույլ են տվել վերոնշյալ նորմերի խախտումներ և անտեսել ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտած դատողությունը՝ զրկելով վերջինիս տվյալ վարույթին մասնակցելու, դիմումներ, միջնորդություններ, բացարկներ ներկայացնելու և օրենքով չարգելված եղանակով պաշտպանելու իր իրավունքները, ինչի արդյունքում խախտվել է Լարիսա Թոթոլյանի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

1.8. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատված լինեն նոտարի կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացված լիազորագրով: **Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ** (...)»:

Հայտնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մուտք արված դիմումներին կից ներկայացվել են փաստաբանին հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի բնօրինակը, նույնականացման քարտի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները: Մինչդեռ, այն հարկադիր կատարողը, որի վարույթում գտնվել է տվյալ գործը՝ Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի պետ, պարոն՝ Միհեր Խուրշուդյանի գլխավորությամբ կրկին անգամ ցույց են տվել նորմատիվ իրավական ակտերը խախտելու իրենց փորձը, նշելով, որ լիազորագիրը պատշաճ չի, զրկելով Նարեկ Սամսոնյանին՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու հնարավորությունից, ընթացք չտալով վերջինիս կողմից ներկայացված դիմումին, խախտելով նաև Լարիսա Թոթոլյանի

իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով:

1.9. Անհրաժեշտ եմ համարում նշել, որ այն հարկադիր կատարողը, որի վարույթում գտնվել է վերոնշյալ գործը, անհարգալից է պատասխանել մեր կողմից տեղեկատվություն ստանալու հեռախոսային զանգին, սակայն ապացույց չունենալու պատճառով այդ փաստը չենք դնում սույն դիմումի հիմքում:

1.10. Սույն դիմումը ներկայացնելու պատճառը հանդիսանում է օրենքի չիմացության և/կամ չկիրառման հետևանքով Լարիսա Թոթոլյանի սեփականության և տվյալ կատարողական վարույթին մասնակցելու իրավունքները խախտող անձանց պատասխանատվության ենթարկելը և հետագայում նման խախտումներ թույլ տալը բացառելը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ՝

1. Հանրագրում տեղ գտած հիմնավորումների հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկել այն հարկադիր կատարողին, որի վարույթում գտնվել է տվյալ գործը և Երևան քաղաքի «Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն» բաժնի պետ, պարոն՝ Մհեր Խուրշուդյանին,

2. Փոփոխել, բարելավել կամ ցանկացած այլ ձևով վերանայել ՀՀ հարկադիր կատարման ծառայության գործունությունն այն մասով, որ բացառում է շահագրգիռ անձին՝ որպես երրորդ անձ ներգրավվել կատարողական վարույթին և/կամ քննության առարկա դարձնել վերջինիս կողմից ներկայացված դիմումներին:

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական վարչության պետի 24.03.2022 թվականի գրության պատճենը,

2. Լիազորագրի բնօրինակը,

3. փաստաբանական գործունեության արտոնագրի և նույնականցման քարտի պատճենները:

Հարգանքով՝

Նարեկ Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 3/8, հեռ. 59-41-40

N /28.1/12656-2022
«24» մարտի 2022թ.

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՐԵԿ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ
(ք. Երևան, Չարենցի փողոց, 58-1)

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Արդարադատության նախարարին ուղղված Ձեր՝ 2022թ. մարտի 15-ի թիվ Մ/16989-2022 բողոքի առնչությամբ հայտնում ենք, որ թիվ ԵԴ/15965/02/19 կատարողական թերթի հիման վրա հարուցված թիվ 05203992 կատարողական վարույթը հարկադիր կատարողի՝ 03.03.2022թ.-ի որոշմամբ կարճվել է՝ համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, այն է՝ «Հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե հայցը թողնվել է առանց քննության, մերժվել է, կամ դատական գործի վարույթը կարճվել է»:

3/24/2022

X

Hayk Sanoyan

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: SANOYAN HAYK 3810910082

ՀԱՅԿ ՍԱՆՈՅԱՆ

Կատարող՝ Մ. Ալավերդյան
ԱՆ վերահսկողական վարչություն
Հեռ. 010-59-41-40

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ՀՀ, քաղաք Երևան
«03» փետրվարի, 2022 թվական

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՐԻՍԱ ՍԵՐԳԵԻ ԹՈԹՈԼՅԱՆՍ (Նույնականացման քարտ՝ 005723713, տրված 011-ի կողմից, վավերական մինչև 2026 թվականի նոյեմբերի 16-ը, հաշվառման հասցեն՝ ՀՀ, քաղաք Երևան, Խորենացի 6, 9)

ԼԻԱԶՈՐՈՒՄ ԵՄ

Միքայել Արիստակեսի Դանիելյանին (նույնականացման քարտ՝ 008287369, տրված 08.05.2018 թվականին 004-ի կողմից, փաստաբանական գործունեության թիվ 2866 արտոնագիր) և/կամ

Վարդան Գարիկի Վարդանյանին (անձնագիր՝ AT0367705, տրված 29.01.2020 թվականին 011-ի կողմից) և/կամ

Հասմիկ Գևորգի Հակոբյանին (անձնագիր՝ AT0290067, տրված 28.10.2019 թվականին 008-ի կողմից) և/կամ

Նարեկ Երվանդի Սամսոնյանին (նույնականացման քարտ՝ 008261950, տրված 03.05.2018 թվականին 011-ի կողմից, փաստաբանական գործունեության թիվ 2354 արտոնագիր)

միասին կամ առանձին իմ անունից և/կամ իմ փոխարեն հանդես գալ ՀՀ դատական, ոստիկանության, նոտարական մարմիններում, ՀՀ բոլոր նախարարություններում, ՀՀ կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա բոլոր այլ մարմիններում, պետական և ոչ պետական բոլոր այլ մարմիններում, տեղական ինքնակառավարման և ինքնավար բոլոր մարմիններում, առևտրային և ոչ առևտրային բոլոր կազմակերպություններում, ֆիզիկական անձանց առջև, պաշտոնատար անձանց առջև, կնքելու պայմանագրեր, ներկայացնելու և ստանալու փաստաթղթեր, ստորագրելու դրանք, անելու միջնորդություններ, իմ անունից հանդես գալու որպես հայցվոր և պատասխանող, ստանալու որպես դատական ծախս իմ օգտին բռնագանձման ենթակա գումարը, իրականացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածներով, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական այլ ակտերով ներկայացուցչին վերապահված բոլոր իրավունքները և պարտականությունները, այդ թվում, բայց ոչ միայն հետևյալները՝

1) հայցադիմումը ստորագրելու.

2) արբիտրաժային համաձայնություն կնքելու և վեճն արբիտրաժ հանձնելու վերաբերյալ համաձայնություն տալու.

3) հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու.

4) հայցապահանջներն ամբողջովին կամ մասնակիորեն ընդունելու.

5) հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոխելու.

6) հաշտության համաձայնություն կնքելու.

7) հաշտարարության վերաբերյալ համաձայնություն կնքելու.

8) արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթացին մասնակցելու.

9) լիազորություններն այլ անձի փոխանցելու (վերալիազորում կատարելու).

10) դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերն ստանալու.

11) դատական ակտը բողոքարկելու.

12) կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացնելու:

Միաժամանակ, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով, **Լարիսա Մերգեի Թոթոյանս լիազորում եմ Միքայել Արիստակեսի Դանիելյանին** և/կամ **Վարդան Գարիկի Վարդանյանին** և/կամ **Հասմիկ Գևորգի Հակոբյանին** և/կամ **Նարեկ Երվանդի Սամսոնյանին՝** իմ իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում և կատարել օրենքով կատարողական վարույթի մասնակցին վերապահված բոլոր, այդ թվում՝ հետևյալ գործողությունները.

1) Դատարանից ստանալ կատարողական թերթ,
2) Կատարողական թերթ ներկայացնել և հետ վերցնել,
3) Մասնակցել կատարողական գործողություններին,
4) Բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները,
5) Ստանալ իմ օգտին բռնագանձված գույքը և/կամ դրամը:

Լիազորված անձինք կարող են կատարել սույն լիազորագրում նշված բոլոր գործողությունները կամ դրանց մի մասը յուրաքանչյուրն առանձին՝ առանց մյուսի ներկայության, ինչպես նաև համատեղ:

Լիազորագիրը տրվում է 3 (երեք) տարի ժամկետով:

ԼԻԱԶՈՐՈՂ՝

ԼԱՐԻՍԱ ԹՈԹՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր № 2354

ՆԱՐԵԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Лицензия № 2354
на право адвокатской деятельности

НАРЕК САМСОНЯН

License № 2354
of advocate's activity

NAREK SAMSONYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

Նախագահ՝
Председатель
Chairman

Արա Զոհրաբյան
Ара Зограбян
Ara Zohrabyan

25.11.2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ID CARD
ARM
ՍԱՄՍՈՆՅԱՆ
SAMSONYAN
ՆԱՐԵԿ
NAREK
ԱՐԿԱԴԻ
M
AM
30.03.1991
AM
008261950
03.05.2028

I<ARM0082619509<<<<<<<<<<<<<<<
9103306M2805036ARM<<<<<<<<<<<8
SAMSONYAN<<NAREK<<<<<<<<<<<<<<